

ԼԵԶՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

Քան. գիտ. թեկնածու Մ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Լեզվի իմացությունը ճշտելու համար սովորաբար հարցնում են, թե որ լեզուն է մայրենի, և որն է օտար: Ենթադրվում է, որ մայրենի լեզվով մարդն ազատ հաղորդակցվում է, կարդում, գրում և հասկանում: Իսկ արդյո՞ք հասկանալի են մայրենի լեզվով շարադրված դասագրքերն աշակերտներին: Պարզելու համար այցելել ենք մի քանի դպրոց՝ և՛ հիմնական, և՛ ավագ, և՛ վարժարան, զրուցել տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների հետ: Մեր ուսումնասիրության շրջանակներում ընդգրկել ենք 1-12-րդ դասարաններում դասավանդվող հանրակրթական բոլոր դասագրքերը: Խնդիրներ շատ կան՝ և՛ ծրագրային ու բովանդակային, և՛ լեզվական: Մի կողմ թողնելով ծրագրային ու բովանդակային հարցերը՝ ամփոփ ներկայացնենք, թե մայրենի լեզուն խաթարող լեզվական ինչ խնդիրներ կան արդի դասագրքերում:

Նշենք, որ որոշ առարկաների դեպքում ուսուցիչները դասագրքերի ընտրության հնարավորություն ունեն և քիչ թե շատ մատչելի դասագիրքն են ընտրում: Սակայն, այս դեպքում էլ մեկ այլ խնդիր է առաջանում. շարադրանքը մատչելի է, բայց ծրագրային կարևոր հարցեր բացակայում են:

Եթե այսօր դպրոցը աշակերտակենտրոն է, և ուսուցչի դերը նվազագույնի է հասցվում, ապա հակասություն է նկատվում. Դասագրքերը չեն համապատասխանում դրան: Դասագրքում ընդգրկված են այնպիսի նյութեր, որ ուսուցչի կողմից լրացուցիչ բացատրության կարիք ունեն, իսկ այդ դեպքում միասնականությունը խախտվում է, չէ՞ որ բոլոր ուսուցիչները չեն կարող նույն ձևով բացատրել կամ առհասարակ բացատրել:

Այնուամենայնիվ, նշենք, որ բոլոր ուսուցիչներն առանձնացրին գրեթե նույն խնդիրները: Նկատի ունենալով դրանք, ինչպես նաև մեր ուսումնասիրության արդյունքները՝ խմբավորված ներկայացնենք դասագրքերում առկա լեզվական խնդիրները:

Շարադրանքի բարդության խնդիր:

Գուցե դասագրքերի հեղինակները շատ գիտակ են, վաստակավոր գիտնականներ են, ավելի մեծ լսարանների հետ գործ ունեն, բայց երեխայի համար գրված դասագիրքը պետք է նրա տարիքային

առանձնահատկություններին և կարողություններին համապատասխան լինի: Ուսուցիչները նշում են, որ եթե ծնողը չմիջամտի, երեխան շատ բան չի հասկանա: Միտքը պետք է ավելի պարզ ձևով ձևակերպվի, որ երեխան ինքնուրույն, առանց ծնողի կամ ուսուցչի միջամտության, կարդա և հասկանա: Մինչդեռ երեխան մայրենիով շարադրված տեքստը կարդում և չի հասկանում:

Օրինակ՝ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի բնագրերը շատ բարդ են, այդ տարիքային խմբի համար անհասկանալի: Այսպես, Ֆ. Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել»-ից մի հատված է տրվում, որը այդ տարիքային խմբի համար բարդ է: Ինչպես պարզեցինք հարցումների ընթացքում, ուսուցիչները դժվարանում են 3-րդ դասարանի աշակերտին բացատրել «սառած խոսքեր» արտահայտությունը: Երբեմն էլ բարբառային բառեր են հանդիպում, որոնք ևս անհասկանալի են այդ տարիքային խմբին, բայց դա, թերևս, հնարավոր է լինում բացատրել, քանի որ մեր միջավայրին հատուկ է⁵⁵:

3-րդ դասարանի երեխային առաջադրանք է տրվում՝ կազմել բայական այսինչ կաղապարով նախադասություն: Տարրական դասարանի երեխան չի հասկանում կաղապար բառը, հետևաբար՝ առաջադրանքը ավելի մատչելի պետք է շարադրել:

Բնագիրական առարկաների դասագրքերում բուհական ծրագրերին համապատասխան նյութ է մատուցվում խիստ գիտական ոճով: Հասարակագիտության դասագիրքը շատ ծավալուն է գրված՝ երկարաշունչ նախադասություններով⁵⁶: Ուսուցիչը ստիպված է լինում յուրաքանչյուր նախադասություն մեկ առ մեկ բացատրել: Այսինքն՝ հնարավոր չէ, որ հանձնարարվի դասը, աշակերտը ինքնուրույն կարդա և հասկանա:

Հայոց պատմության դասագրքում գրաբարով շարադրանք կա, որ խիստ դժվարացնում է ընկալումը: Բացի այդ՝ հայոց պատմության դասագրքերում առատ են տեղանունները, ինչը ևս լրացուցիչ բարդություն է ստեղծում: Կա նաև մեկ այլ խնդիր. 9-րդ դասարանի դասագրքերն ավելի մատչելի են շարադրված, քան 6-րդ և 7-րդ դասարաններինը: Վերջիններս կարծես բուհական ձեռնարկներ լինեն⁵⁷:

Իրավունքի սահմանումները արհեստականորեն բարդեցված են, տրված են շրջուն շարադասությամբ, երկարաշունչ նախադասություն-

⁵⁵ Վ. Ա. Սարգսյան և ուրիշներ, Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Ե., 2014, 160 էջ:

⁵⁶ Ս. Պետրոսյան և ուրիշներ, Հասարակագիտություն 10, Ե., 2009, 240 էջ:

⁵⁷ Է. Գևորգյան և ուրիշներ, Հայոց պատմություն 9, Ե., 2014, 192 էջ: Ա. Մելքոնյան և ուրիշներ, Հայոց պատմություն 6, Ե., 2013, 176 էջ: Ա. Մելքոնյան և ուրիշներ, Հայոց պատմություն 7, Ե., 2014, 176 էջ:

ներով: Ուսուցիչը ստիպված է լինում սեփական սահմանում մշակել և ներկայացնել, որի իմաստը նույնն է լինում, սակայն ձևակերպման փոփոխությունը թույլ է տալիս ըմբռնել իմաստը: Կարծում ենք՝ աշակերտը իրավունքի դասագրքում բարդ բառեր սովորելու նպատակ չունի, հետևաբար՝ կարելի է նյութը մատուցել շատ մատչելի բանապաշարով:

Ուսուցիչները նշում են, որ աշակերտը ֆիզիկայի կամ մաթեմատիկայի խնդիրը կարդում է, սկսում է մտածել ոչ թե ֆիզիկայի կամ մաթեմատիկայի մասին, այլ փորձում է հասկանալ լեզուն:

Որպես բարդ շարադրանքի օրինակ նշենք Հասարակագիտության 10-րդ դասարանի դասագրքից մի հատված՝ «Հոգեբանական արտացոլումը հայելային չէ, պասիվ չէ, այն ուղեկցվում է փնտրտուքներով, ընտրությամբ և հանդիսանում է մարդու գործունեության անհրաժեշտ կողմերից մեկը: Մարդու հոգեկանը ոչ միայն արտացոլող, այլ նաև ապրման բնութագիր ունի⁵⁸»: Անշուշտ, նկատելի է, որ աշակերտի համար ոչ մատչելի ձևով է մատուցվում նյութը: Հետևաբար՝ ուսուցիչները ստիպված են լինում դասախոսություններ պատրաստել, մշակել դասագրքի նյութը և մատուցել աշակերտին:

Արտադրված նյութի խնդիր:

Երբեմն դասագրքի նյութն անհասկանալի է ոչ թե շարադրանքի, այլ մեկ ուրիշ պատճառով. պարզապես ավելի բարձր դասարանների դասագրքերից նյութն ուղղակիորեն արտատպված է: Ցանկալի է, որ յուրաքանչյուր տարիքային խմբի համար առանձին դասագիրք գրվի, որը կոնկրետ տվյալ տարիքային խմբի համար նախատեսված նյութը ընդգրկի: Ցանկացած նյութ կարելի է շատ մատչելի ներկայացնել, որ փոքրիկ երեխան հասկանա, և շատ բարդ ներկայացնել, որ անգամ մասնագետներին անհասկանալի թվա:

Տերմինային տարբերակների կամ անճշտության խնդիր:

Մաթեմատիկայի 3-րդ դասարանի դասագրքում հստակ չէ, օրինակ, պատկերները *համընկնելի* թե *համընկնող* են, երբեմն նշվում է մեկը, երբեմն՝ մյուսը, հարց է ծագում՝ արդյոք դրանք նույնն են, թե տարբեր⁵⁹: Որպես տերմինային տարբերակների օրինակներ՝ նշենք հետևյալը՝ ինֆրակարմիր-ենթակարմիր, գերմանուշակագույն-անդրմանուշակագույն-ուլտրամանուշակագույն⁶⁰ (ֆիզիկայի դասագրքեր), վերջերգ-վերջաբան (գրականության դասագրքեր): Քիչ չեն նաև տերմինային անճշտու-

⁵⁸ Ս. Պետրոսյան և ուրիշներ, Հասարակագիտություն 10, Ե., 2009, էջ 113:

⁵⁹ Ս. Մկրտչյան և ուրիշներ, Մաթեմատիկա 3, Ե., 2008, 193 էջ:

⁶⁰ Է. Ղազարյան և ուրիշներ, Ֆիզիկա 12, Ե., 2011, 264 էջ:

թյունները: Այսպես, օրինակ՝ 10-րդ դասարանի հանրահաշվի դասագրքում նշված է *կողմի* երկարություն, մինչդեռ պետք է լինի *կողի* երկարություն⁶¹: Բացի այդ՝ դասագրքերը առատ են տերմիններով: Եվ այն դեպքերում, երբ հնարավոր չէ խուսափել տերմինների կիրառումից, և անհնար է բեռնաթափել դասագիրքը տերմիններից, կարծում ենք՝ անհրաժեշտ է նշել տվյալ տերմինի բացատրությունը, մինչդեռ գործող դասագրքերում սովորաբար տերմինը կիրառվում է, սակայն որևէ բացատրություն չի տրվում: Ցանկալի է, որ դասագրքերում բառարանային հատվածներն ավելի ընդգրկուն լինեն: Կան և՛ քիչ գործածական բառեր՝ հնաբանություններ, և՛ նորաբանություններ, որ որևէ կերպ չեն բացատրվում, բառարան-բառացանկերի առկայությունը դասագրքերում, կարծում ենք, կլուծի այս խնդիրը:

Տառատեսակի և տառաչափի միասնականության խախտման խնդիր:

Տառատեսակի և տառաչափի միասնականության խախտման խնդիր կա դասագրքերում: Շատ կարևոր է, որպեսզի պահպանվի այդ սկզբունքային հարցը, քանի որ Այբբենարանը կազմված է ուրիշ տառատեսակով է, իսկ դրան հաջորդող Մայրենիի դասագրքերը՝ այլ: Եվ աշակերտը, անցում կատարելով Մայրենիի դասագրքերին, չի հասկանում, որ դրանք նույն տառերն են: Մեր հարցումները ցույց տվեցին, որ հատկապես խնդրահարույց են Թ, Հ, Շ տառերը:

Բնագրի և առաջադրանքի անհամապատասխանության խնդիր:

Դասագրքերը վերահրատարակելիս պետք է շատ ուշադիր լինել, որպեսզի բնագիրը և առաջադրանքը համապատասխանեն: Օրինակ՝ Մայրենիի 3-րդ դասարանի դասագրքի 102-103 էջերում տրված է Ղ. Սիրունյանի «Մեր Անդրանիկը» բնագիրը, նյութին հաջորդող առաջադրանքը, սակայն, վերաբերում է նախորդ հրատարակության դասագրքի բանաստեղծությանը, որը նոր դասագրքում չկա⁶²:

Մտքի անճշտության խնդիր:

Միայն ձևակերպված մտքեր կան դասագրքերում: Այսպես, օրինակ՝ *Ավյրոմեքենան* բարձել են 4 տոննա ձմերուկ⁶³: Կամ՝ «Անհայտ նվազելին գտնելու համար տարբերությունը գումարում ենք *հանելին*»: Անհայտ

⁶¹ Գ. Գևորգյան, Ա. Սահակյան, Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր: Հանրակրթ. դպր. 10-րդ դաս. դասագիրք (ընդհանուր և հումանիտար հոսքերի համար), Ե., 2009, էջ 62:

⁶² Վ. Ա. Սարգսյան և ուրիշներ, Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Ե., 2014, 160 էջ:

⁶³ Ս. Մկրտչյան և ուրիշներ, Մաթեմատիկա 3, Ե., 2008, էջ 109:

հանելին գտնելու համար նվազելիից հանում ենք տարբերությունը»⁶⁴: Կամ՝ 1 սմ կողմով *քառակուսուն* անվանում են նաև 1 քառակուսի սանտիմետր⁶⁵ (ընդգծումները մերն են՝ Մ. Ս.):

Քերականությանն առնչվող խնդիրներ:

Հանրակրթական ծրագրով մինչև 4-րդ դասարան քերականություն չի դասավանդվում: Սակայն ուսուցիչները կամընտրական հիմունքներով կիրառում են Հ. Ավագյանի «Պատկերազարդ քերականություն» դասագիրքը, որպեսզի աշակերտը մինչև 4-րդ դասարան կարողանա քերականության մասին տարրական պատկերացում կազմել: Գործող դասագրքերում դա էական բացթողում են համարում գրեթե բոլոր ուսուցիչները: Քերականական որևէ նյութ չկա դասագրքում: Ուսուցիչը ինքը պետք է փնտրի, ներկայացնի լրացուցիչ քերականական աշխատանքներ: Այսպես, չի կարելի երեխային 4 տարի չասել, որ այսօր-ը գրվում օ-ով, և միայն 5 տարի անց ներկայացնել, թե դա գրվում է օ-ով, ոչ թե ո-ով:

Ինչպես նշում են ուսուցիչները, Վ. Սարգսյանի «Այբբենարանը» շատ լավ է, որ խաղարկային գիրք է, բայց լրիվ խարխլում է երեխայի ընկալմամբ վանկի գաղափարը: Այսպես, դասագրքում նկարված է աղջիկների պար, և երեխան կողքի վանդակում ավելացնում է –*ան* մասնիկը՝ ստանալով *պարան* բառը: Ի վերջո կարծում է, որ *պարան* բառը այդպես էլ վանկատվում է՝ *պար-ան*:

Ուղղագրության միասնականության խնդիր:

10-րդ դասարանի դասագրքում⁶⁶ խախտված է ուղղագրության միասնականությունը. նյութի որոշ հատվածներ գրված են աշխարհաբար թարգմանությամբ, որոշ հատվածներ գրաբար: Մինչդեռ 12-րդ դասարանում ավարտական քննությունների ժամանակ անհրաժեշտ է միայն բնագրի իմացությունը, այսինքն՝ գրաբար: Հետևաբար՝ պետք է ոչ միայն պահպանել ուղղագրության միասնականությունը, այլև հստակ ներկայացնել, թե ինչ սկզբունքներով են նույն հեղինակի տարբեր գործեր միևնույն դասագրքում տարբեր ուղղագրություններով ներկայացվում:

Հատուկ անունների գրության խնդիր:

Դասագրքերում կա նաև բաղադրյալ հատուկ անունների գրության խնդիր: Լեզվի դասերին հստակ կանոններով սովորեցնում են աշա-

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 136:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 168:

⁶⁶ Վ. Ներսիսյան, Լ. Մնացականյան, Հայ գրականություն 10, Ե., 2014, 208 էջ:

կերտին, թե ինչպես պետք է գրել այս կամ այն հատուկ անունը: Իսկ այդ նույն աշակերտը գրականության կամ պատմության դասագրքում տեսնում է, որ, օրինակ, Խոր վիրապի վիրապ-ը գրված է մեծատառ, և խառնաշփոթ է առաջանում, թե որ տարբերակն է ճիշտ: Կամ, օրինակ, Կիլիկիայի թագավորությունը գրված է մեծատառ ևն (10-րդ դասարանի դասագրքեր): Հանդիպում են նաև հատուկ անունների ոչ միասնական գրության ձևեր, ինչպես օրինակ՝ Այնշտայն-էյնշտեյն (բնագիտական դասագրքեր):

Դասագրքի ոչ ճիշտ ստեղծման խնդիր:

Ուսուցիչների մի խումբ համոզված է, որ դասագրքերի խնդիրները հիմնականում պայմանավորված են նրանով, որ տարիներ առաջ որոշում կայացվեց, որ ընդունելության քննությունների նյութը պետք է լինի դասագրքերից: Հետևաբար՝ դասագրքերը ծանրաբեռնվեցին անիմաստ տերմինաբանությամբ, բարդ նյութով, խրթին շարադրանքով և աշակերտի կրթական մակարդակին ոչ հարիր նյութի մատուցմամբ: Ոչ թե ընդունելության քննությունների նյութն է համապատասխանում դասագրքին, այլ ճիշտ հակառակը՝ ընդունելության ծրագրին համապատասխան դասագրքեր են կազմվում:

Բացի այդ՝ դասագրքերում կան խրթին նյութեր, որ հանրամատչելի չեն, դրանք հասկանալի են դասարանի մի ստվար հատվածի համար: Այդ նյութերը կարելի է մատուցել օժանդակ ձեռնարկների մեջ, որ ուսուցիչը կարող է հանձնարարել առավել ընդունակ և օժտված աշակերտներին, բայց այդ նյութը ոչ մի կերպ չի կարելի ընդգրկել հանրակրթական դասագրքերում:

Ողջունելի է, որ հայալեզու գրականություն է ստեղծվել, բայց դա միայն բավարար չէ: Դասագրքի ստեղծման աշխատանքներին պետք է մասնակից լինի մասնագետների մի մեծ խումբ՝ և՛ տվյալ ոլորտի մասնագետներ, և՛ մանկավարժներ, և՛ տարիքային հոգեբաններ, և՛ որակավորված թարգմանիչներ:

Լեզվի դասագրքերում (7-9-րդ դասարանների դասագրքեր) առաջադրանքների համարակալումները նշված են հայոց այբուբենի տառերով, լավ է, անշուշտ, բայց երբ նույն էջում մի քանի Ա է լինում, դժվարություն է առաջանում, հասկանալի չէ, թե ուսուցիչը որ առաջադրանքը նկատի ունի:

Միալ թարգմանության խնդիր:

Բնագիտական առարկաների դասագրքերը հիմնականում թարգմանական դասագրքեր են: Հաճախ խնդիրներ են առաջանում սխալ

թարգմանության պատճառով: Օրինակ՝ 11-րդ դասարանի դասագրքում⁶⁷ (էջ 193) գրված է, որ լույսն ունի նաև *բնախոսական* ազդեցություն, ինչպես նշված է 9-րդ դասարանի դասագրքում: *Բնախոսական* տերմինը ուսուցիչներին անհասկանալի է, 9-րդ դասարանի դասագրքում որևէ դիտարկում այս մասին չկա: Ինչպես փաստում են ուսուցիչները, փորձել են կապ հաստատել դասագրքի հեղինակների հետ և ճշտել իմաստը, պարզվել է, որ հեղինակներից որևէ մեկը դա չի գրել, դա ընդամենը թարգմանված հատված է, որ հավանաբար սխալ թարգմանության հետևանքով տեղ է գտել դասագրքում: Նման դեպքերում, կարծում ենք, պետք է առնվազն փակագծում նշել հայտնի միջազգային տարբերակը, կամ հղում ներկայացնել, տողատակում բացատրել:

Ամփոփելով վերը նշվածը՝ առաջարկում ենք.

1. պահպանել գրագիտության, ուղղագրության, կետադրության տարրական կանոնները,
2. պահպանել ուղղագրության միասնականությունը,
3. պահպանել միջառարկայական կապերը,
4. ներկայացնել բառացանկ-բառարաններ,
5. դասագրքերը կազմել տվյալ տարիքային խմբի ընդունակություններին, կարողություններին, կրթական մակարդակին համապատասխան,
6. դասագրքաստեղծման գործընթացում ընդգկել ոչ միայն տվյալ առարկայի մասնագետների, գիտնականների, այլև ուսուցիչների, տարիքային հոգեբանների, ինչպես նաև որակավորված թարգմանիչների:
7. վերականգնել տարրական դասարաններում քերականության դասաժամերը:

⁶⁷ Է. Ղազարյան և ուրիշներ, Ֆիզիկա 11, Ե., Ավագ դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար, Ե., 2010, 368 էջ:

Мери Саргсян.- Языковые проблемы в школьных учебниках.-

Человек свободно общается, читает, пишет на родном языке. Но понятны ли ученикам школьные учебники, написанные на их родном языке. Чтобы узнать это, мы организовали визиты в начальные и средние школы, колледжи, поговорили с учителями разных предметов. Наше исследование включало все учебники государственной общеобразовательной школы, преподаваемые в 1-12 классах.

В данной статье представляются языковые проблемы, искажающие язык современных учебников.

Meri Sargsyan.-Language problems in school textbooks.-The person freely communicates, reads, writes in his native language. But whether the pupils understand the school textbooks written in their native language. To learn it, we have organized a visit to elementary and high schools, colleges, have talked to teachers of different subjects. Our research included all textbooks of the public comprehensive school taught in grades 1-12.

This article presents language problems distorting language of modern textbooks.